
Տրանսպորտային միջոց ձեռք բերելու նպատակով վարկ ստանալու համար պահանջվող փաստաթղթեր

- անձնագիր (բացակայության դեպքում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթուղթ՝ զինվորական գրքույկը, ՀՀ ներքին գործերի նախարարության մարմինների կողմից ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ, փախստականների համար՝ փախստականի վկայականը, փախստականի ճամփորդական փաստաթուղթը, օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար՝ օտարերկրյա պետության անձնագիրը, անձը (ինքնությունը) հաստատող միջազգայնորեն ճանաչված փաստաթղթերը, ՀՀ հատուկ անձնագիրը, կացության վկայականը), իսկ առկայության դեպքում՝ նաև սոցիալական քարտ,

- տեղեկանք գրանցման/հաշվառման վերաբերյալ տրված իրավասու մարմնի կողմից (ձև 3),

- տեղեկություններ իր, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև ընտանիքի անդամների եկամուտների վերաբերյալ, այդ թվում.

- ✓ հիմնական աշխատանք ունեցողների համար՝ տեղեկանք աշխատանքի կամ գործունեության վայրից՝ պարտադիր վավերապայմաններով (աշխատավայրի հասցեն, հեռախոսի համարները, ղեկավարի անունը, ազգանունը), տվյալ աշխատավայրում աշխատանքային ստաժը, զբաղեցրած պաշտոնը, ամսական աշխատավարձի չափը,
- ✓ գյուղական վայրերում ապրող և հիմնական աշխատանք չունեցողների համար՝ սեփականության մասին տեղեկանք համայնքի ղեկավարի հաստատմամբ,
- ✓ հիմնական աշխատանք չունեցողների համար՝ այլ փաստաթղթեր, որոնք հնարավորություն են տալիս գնահատելու Հաճախորդի եկամուտները:

- տրանսպորտային միջոցների գնահատման ակտ տրված մասնագիտացված կազմակերպության կողմից,

- տրանսպորտային միջոցների գրավադրման վերաբերյալ տեղեկանք տրված Անշարժ գույքի կադաստրի համապատասխան ստորաբաժանման կողմից,

- այլ փաստաթղթեր՝ ըստ անհրաժեշտության:
